

# Գարնան ճամբով հեղինակ՝ Հակոբ Մնձուրի

Մկրչենց Վահանը կնոջը՝ Նանոյին հետ տունեն ելան այգիները երթալու, որթատունկերուն տակը բահելու համար: Երկուքն ալ տրեխներ հագեր էին, բուրդե գուլպաներ քաշեր իրենց ծունկերը, մեկ-մեկ ալ բահ ունեին՝ ուսերնին: Նանոն երկայն գոգնոցը կապեր էր առջևը, մինչև վիզն ալ գոցեր էր անով:

Այգիները, ինչպես ընդհանրապես կըլլան, գետին երկու եզերքներն էին: Մոտ չէին, բայց հեռու ալ չէին սեպվեր, միայն թե՛ ճամբաները շիտակ չէին, դարվարները շատ էին, շարունակ գառիվար պիտի իջնային:

Քովքովի կքալեին: Արևը նոր կծագեր: Չորի մը մեջ, կապույտ քոայի մը տակը, կետ մը արծաթի պես կշողար, ջո՞ւր էր, կարելի չէր ճշտել, հայտնի չէր, բայց ոչ Վահանը, ոչ Նանոն անոր նայեցան: Դարվար՝ ճամբաներուն վրա մարդ չէր երևար, իրենց ետևեն ալ եկող չկար:

Սալը անցան, երկու լեռներուն միջև սեղմված ձորին ամենեն նեղ տեղը եկան: Վերը երկինքն էր, վարն ալ իրենք էին՝ էրիկ-կնիկ: Վահան, որ կեռասենիի ճյուղե բարակ ծխափողը ձեռքը թե կծխեր, թե կքալեր, հանկարծ խոսիլ ուզեց:

— Ինձի նայե,— ըսավ Նանոյին:

— Նայեցա, ի՞նչ կա, ի՞նչ պիտի ըսես,— պատասխանեց կինը:

— Եկուր՝ հետդ Գարնան ճամբով երթանք,— ըսավ Վահան:

— Գարնան՞ ճամբով, ինչքի՞նչ է կավ, ի՞նչ եղար,— բացականչեց Նանոն:— Ամեն մարդ կարճ ճամբեն կերթա, մենք ալ ելլենք լեռնե՞րը պտտինք: Չյուները նոր հալած կըլլան, անձրև շատ կուգա, ոտք չբռներ, կսահին՝ Գարնան ճամբեն կերթան: Հիմա, որ ամեն դի չոփ-չոր է, կարճ ճամբան ձգենք, երկարովը՞ երթանք:

— Թող երկայն ըլլա, հոնկե պիտի երթանք այսօր,— պնդեց Վահան: Ու Նանոին թևեն քաշեց:

— Գնա բանդ, ես ալ կըսեմ՝ ի՞նչ կըսես, ինչո՞ւ Գարնան ճամբով երթանք կըսես,— բացականչեց Նանտ սթափելով,— ինչ անխելք եմ, որ կայներ քեզ մտիկ կընեմ: Մտքեդ ինչ անցնի՝ ա՞ն պիտի ըլլա:

— Այո, պիտի ըլլա,— պատասխանեց Վահան: Ու կնոջը թենն քաշեց նորեն, ստիպելով, որ իրեն հետ քալէ:

— Ատոր համար՝ իս մի համոզեր,— ըսավ կինը,— ես չեմ գար, գնա, Հեմ՝ մարդուն ի՞նչ կըսեն: Հոնկէ որ երթանք, չպիտի՞ տեսնեն մեզ, չպիտի հասկնան, ամենուն բերանը պիտի իյնանք: Ինքզինքդ չե՞ս կրնար բռներ, կեփի՞ս: Հեմ դուն տուն չունի՞ս, տունը ինչո՞ւ համար եղեր է:

— Չէ, չունիմ: Ես ինչ որ կըսեմ՝ ան պիտի ըլլա,— ըսավ Վահան, շեշտակի կնոջը դեղին թարթիչներուն ու այտերուն նայելով, որոնք առտվան արևի մեջ ոսկեգույն կփայլեին, ու բռնացավ, մինչև որ կինը հետևեցավ իրեն:

Ճամբեն զատվեցան: Գարնան ճամբով գացին: Քով-քովի լեռան զառիվերը ելան, լեռան խուլ ճամբաներեն քալեցին ու չոր, ամայի ձորը իջան:

\* \* \*

Երբ Աղիջրակ եկան, գյուղին հարսերեն, իր տարեկիցներեն՝ Գալենց Մարոյին, Արխանենց Դշխունին, Պետրոսենց Տուտունին դեմ դիմաց ելան, որոնք աղջիկներու ու մանուկներու բազմությունով մը, բահեր, փետասոներ, ճյուղապենները շալակնին կապած՝ գուլպա հյուսելով ու խոսելով, նույնպես այգի բահել կերթային: Նանտ չուզեց, որ այս հանդիպումը ըլլար, բայց ի՞նչ կրնար ընել: Վահան չկեցավ կիներուն մեջ ու առաջ անցավ, իսկ հարսերը չզսպեցին իրենց զարմանքն ու հետաքրքրությունը ու հեզնեցին:

— Նանտ կերևա թե ձյունները հալեր են, ջրեղեն է ճամբաները, ոտքերնիդ չթրջելու համար երկանդ հետ Գարնան ճամբեն եկաք:

— Հա յա,ատանկ ըրինք,— պատասխանեց Նանտ: Ուրիշ ի՞նչ ըսեր: Լռելու ըլլար ալ ավելի պիտի կասկածեին իր վրա:

— Չէ նը,— շարունակեց Պետրոսենց Տուտուն,— չոփ-չոր ճամբան կեցած տեղը ինչո՞ւ հոնկէ դարձաք:

— Խելքերնիս փչեց, անանկ ուզեցինք, հոնկէ դարձանք: Ի՞նչ կա եղեր,— պատասխանեց Նանտ:

— Աղ չէ,— միջամտեց Արխանէնց Դշխուն,— Գարնան ճամբան մարդ չըլլար, գործ մը տեսնենք՝ աղայիդ հետ ըսիր: Հոնկէ իջաք:

Նանտ անոնց խոսքերէն առնված ըլլալը ցուցնելու համար բողոքեց.

— Ալ բան կա նը՝ մտքերնուդ անցընէիք: Աղեկ ըրինք, ըսելիք մը ունի՞ք: Մարդ հոնկէ իջնալու անպատճառ գեշ մտքի համա ր կըլլա:

Այգիները հասան:

\* \* \*

— Տեսա՞ր, ըսածս չեղա՞վ, ինտո՞ր մտքերնին կաթեց, ինտո՞ր հասկցան,— ըսավ Նանտ Վահանին՝ այգին, առաջին որթատունկին տակէն սկսելով բահել, եռանդով ոտքովը բահը հողին մխելով, հողը շրջելով, ներքևի թարմը վրան հանելով, ամեն ծռելուն, ելլելուն իր երկու գույգ ծամերը կուրծքին վրա իյնալով, ամեն անգամ կոնակը նետելով:

— Թող հասկնան, թող մտքերնին կաթե,— պատասխանեց Վահան կնոջը հետ նույնպէս բահը հողը մխելով, ներքևի հողը վրան շրջելով,— ո՞վ ինծի կխառնվի, ո՞վ իմ քեհյաս է:

— Տրդատ քեռիդ որ չելլեիր, տեղը կմնայիր,— ըսավ Նանտ,— ամռան ետին աշուն է, ան փոկն ալ ան կաշուն է, անանկ է, ո՞վ քեզի կխառնվի, ո՞վ քու քեֆիդ քեհյան է: